Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Ձորակապի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3×4 չափի

2.բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

3.անձը հաստատող փաստաթուղթ

4.ինքնակենսագրություն(Ձև 5)

5.որակավորման տարակարգ ունենելու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

6.հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

7.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/

8.այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

9.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանց:

Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 1-ից մինչև փետրվարի 14-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10^{00}-15^{00}, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. փետրվարի 16-ին՝ ժամը 15:00-ին**, ՀՀ Շիրակի մարզի «Ձորակապի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Ձորակապ, փ. 2 շենք 1: Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 76 56 74 հեռախոսահամարով: